ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ARMENIA TREEPROJECT
«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ

Jinishian Memorial Foundation
JMF

ARMENIAN ENERGY AGENCY



«ԵՄ-Ն ԾՐԶԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ. ԿԱՆԱՉ ՀԱՄԱՅՆՔ՝ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱ»

ԹԵՄԱ 5

ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

OPTIMIZE

2023

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1 **Համայնքային ռեսուրսների հաշվառում և գնահատում (Մասնավոր հատվածի ընկերությունների գույքագրում)**

Գլուխ 2 **Մասնավոր հատվածի և համայնքային ներկայացուցիչների հետ համատեղ աշխատանքի քաղաքականության, ռազմավարության մշակում**

Գլուխ 3 **Ներդրումային միջավայրի ստեղծում և առաջնահերթությունների ձևավորում, կլաստերների ստեղծում**

Գլուխ 4 **ՀՄՀ հայաստանյան և միջազգային փորձի ուսումնասիրություն**

Գլուխ 5 **Սոցիալական գործընկերություն**

Գլուխ 6 **Պետական և մասնավոր գործակցության հասկացությունները և դրույթները**

OPTIMIZE

Հասկացություն բնակավայրերի կանաչապատման մասին

- Կանաչապատումը լանդշաֆտային աշխատանքների համալիր է, որի նպատակն է դեկորատիվ կոմպոզիցիաների ստեղծումը և ծառաբույսերի տնկումը:
- Կանաչապատում ասելով հասկանում ենք նորմատիվա-իրավական ակտերով սահմանված միջոցառումների համակարգ, որն իրականացվում է համայքի մակարդակում և նպատակ ունի կանաչապատ տարածքների ստեղծումը և պահպանումը համայքի բնակիչների համար ավելի հարմարավետ դարձնելու համար:
- Կանաչապատումը սերտորեն կապված է քաղաքային տնտեսության այլ ճյուղերի հետ, այդ թվում կոմունալ տնտեսության, ենթակառուցվածքների, ճարտարապետական բաղադրիչի և այլն:

OPTIMIZE

Հասկացություն բնակավայրերի կանաչապատման մասին

Բնակավայրերի կանաչապատումը իրականացվում է հետևյալ ուղղություններով

1. Հանրային տարածքների բարեկարգում և կանաչապատում, այդ թվում կինոթատրոններ, պետական հիմնարկություններ, բժշկական հաստատություններ և այլն:
2. Բնակելի ֆոնդի, օբյեկտերի բարեկարգում և կանաչապատում, որի մեջ մտնում են մերձտնային, մերձշենքային կանաչապատումը, ինչպես նաև կրթօջախների տարածքների բարեկարգումն ու կանաչապատումը:
3. Ռեկրեացիոն նշանակության մունիցիպալ տարածքների բարեկարգում և կանաչապատում-այս խմբի մեջ են մտնում պուրակները, հանգստի գոտիները:

OPTIMIZE

Բնակավայրերի կանաչապատման կարևորությունը

Կանաչ տնկարկների հիմնական դերակատարություններն են՝

- Սանիտարահիգիենիկ
- Ռեկրեացիոն
- Կառուցվածքային-պլանավորման
- Դեկորատիվ գեղարվեստական

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները

- ✓ Բարելավում են ջերմաստիճանային և խոնավության ռեժիմը՝ մարդու համար ստեղծելով հարմարավետ կենսամիջավայր
- ✓ Հանդիսանում են քաղաքային օդային զանգվածի հիմնական մաքրողներից մեկը
- ✓ Հանդիսանում են վնասակար միկրոօրգանիզմների դեմ պայքարի լավագույն միջոցներից մեկը
- ✓ Հանդիսանում են բնակչության հանգստի հիմնական վայրերից մեկը
- ✓ Հանդիսանում են քաղաքային աղմուկի կլանման, նրա մակարդակի նվազեցման կարևոր միջոցներից մեկը
- ✓ Հանդիսանում են քաղաքային միջավայրի ձևավորման, կառուցվածքի բարելավման հիմնական միջոցներից մեկը
- ✓ Օժտված են գեղագիտական կարևոր նշանակությամբ

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները



Միջին ծառը 24 ժամվա ընթացքում արտադրում է 3 մարդուն անհրաժեշտ թթվածին

Միջին ծառը կլանում է աղմուկի մինչև 25%-ը՝ անդրադարձնելով 74 %-ը

Ասեղնատերևավոր ծառատեսակների տնկարկներում մանրէների քանակը 2-3 անգամ ավելի քիչ է, քան բաց տարածություններում

Կանաչ տնկարկում և մոտակայքում ջերմաստիճանը 3-5 աստիճանով ավելի ցածր է, քան բաց տարածքում

Բնակավայրերի կանաչապատման կատեգորիաները և տիպերը

Կանաչ տնկարկները ըստ ֆունկցիոնալ նշանակության և կառուցվածքի բաժանվում են 2 խմբի (կատեգորիա)՝ ներքաղաքային և մերձքաղաքային, որոնք էլ իրենց հերթին ստորաբաժանվում են 3 ենթախմբերում՝

ա) հասարակական կամ ընդհանուր օգտագործման,

բ) սահմանափակ օգտագործման,

գ) հատուկ նշանակության

OPTIMIZE

Հասարակական կամ ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներ

- Ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները տեղաբաշխված են ինչպես բնակավայրերում, այնպես էլ նրանց մերձակայքում և ծառայում են ժողովրդական լայն մասաների հանգիստն ու ժամանցը անցկացնելու համար:

- Ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներից են
  - ✓ զբոսայգիները
  - ✓ քաղաքային այգիները
  - ✓ պուրակները
  - ✓ բուլվարները
  - ✓ փողոցային տնկարկները
  - ✓ անտառպուրակները
  - ✓ ռեկրեացիոն կանաչ գոտիները

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Զբոսայգիներ

Զբոսայգին ճարտարապետա-գեղարվեստական կոմպոզիցիաներով հարուստ կանաչապատ տարածություն է, որտեղ ստեղծված են բոլոր պայմանները՝ բնակչության կուլտուր-քաղաքական և սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելու համար:

Ըստ ֆունկցիոնալ նշանակության զբոսայգիները լինում են քաղաքային և համայնքային:

Զբոսայգիներում օրինաչափ է, երբ

- կանաչ տնկարկները կազմում են ընդհանուր տարածության շուրջ 70%-ը,
- 10-15%-ը տրամադրել ջրային մակերեսներին,
- 5%-ը՝ մասնաշենքերին ու այլ կառույցներին,
- մնացած 10-15%-ը հրապարակներին և ճանապարհներին:

Խոշոր քաղաքներում զբոսայգիներ հիմնադրելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր այցելուի համար նախատեսել 50-60մ^2 կանաչ զանգված կամ տվյալ քաղաքի զբոսայգիների ընդհանուր տարածությունը հաշվարկել այնպես, որ յուրաքանչյուր քաղաքային բնակչին բաժին ընկնի 10-12մ^2 կանաչ տարածք:

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Զբոսայգիներ






OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Պուրակներ

Պուրակները 0,2-2,0 հա մեծության կանաչապատ տարածություններ են տեղաբաշխված քաղաքների հրապարակներում, պողոտաների ու մագիստրալ փողոցների խաչմերուկներում, հասարակական նշանակության ճարտարապետական կառույցների (թանգարան, թատրոն, կինոթատրոն, կայարան, ԲՈՒՀ, մշակույթի տուն) հարևանությամբ, ինչպես նաև բնակելի թաղամասերում:

Պուրակները ըստ նշանակության պայմանականորեն բաժանվում են 2 խմբի՝ պուրակներ հիմնադրված քաղաքի կենտրոնական տեղամասերում և պուրակներ՝ տեղաբաշխված բնակելի թաղամասերում:

Քաղաքաշինության պրակտիկայում, հատկապես հրապարակներում և խաչմերուկներում, հանդիպում են փոքր պուրակներ, որոնք զուրկ են ծառաթփային բուսականությունից, նման պուրակները պայմանականորեն անվանվում են բաց պուրակներ: Նման պուրակները ձևավորվում են գլխավորապես ծաղկային բույսերով, մասամբ էլ ցածրաճ թփիկներով ու թփերով:

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Պուրակներ





OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Բուլվարներ

Բուլվարները ներքաղաքային կանաչ տնկարկներ են՝ տեղաբաշխված մագիստրալ ճանապարհների, գետերի, լճերի ու ծովերի երկարությամբ և ծառայում են բնակչության կարճատև հանգստի, հետիոտն զբոսանքի ու անցուդարձի համար: Բուլվարները ըստ բնույթի և նշանակության ստորաբաժանվում են հետևյալ հիմնական տիպերում՝

1. Բուլվար տեղաբաշխված երկու հավասարազոր մագիստրալ ուղիների միջնամասում:
2. Միակողմանի բուլվար, որը տեղաբաշխված է մագիստրալ ուղու մեկ կողմից:

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Բուլվարներ

3. Առափնյա բուլվար, որոնք տեղակայված են գետերի, լճերի և ծովերի ափերի ուղղությամբ:

   Նման բուլվարները, բնականաբար, ավելի մեծ մասայականություն են վայելում, քանի որ այստեղ մարդիկ ավելի լավ են հանգստանում:

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Ծաղկային բուլվար

4. Այս տիպի բուլվարները խորհուրդ է տրվում տեղակայել սակավ երթևեկելի փողոցների ուղղությամբ, քանի որ նրանք ամբողջությամբ բաց են, մեկուսացված չեն ճանապարհներից, ունեն բարձր գեղազարդություն և կարող են գրավել վարորդների ուշադրությունը՝ պատճառ դառնալով անցանկալի երևույթների

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Անտառպուրակներ

- ✓ Անտառապուրակը անտառի ստորին հատվածում հատուկ վերակառուցված մերձքաղաքային տնկարկ է, որը նախատեսված է բնակչության ակտիվ հանգիստը և ժամանցը կազմակերպելու ու անցկացնելու համար:
- ✓ Անտառապուրակներ նախագծելիս խորհուրդ է տրվում յուրաքանչյուր հանգստացողի համար հատկացնել 150մ^2 կանաչ տարածություն:
- ✓ Անտառապուրակներում կարելի է տեղադրել հատուկ գեղազարդ ձևավորված հարմարավետ տաղավարներ, որտեղ հանգստացողները կարող են պահպանելով հրդեհային անվտանգության կանոնները, կազմակերպել և իրականացնել ճաշկերույթներ:
- ✓ Անտառապուրակները, ի տարբերություն զբոսայգիների, աչքի են ընկնում ազատ ռեժիմով, այստեղ թույլատրվում է վայրի ծաղիկներից պատրաստել ծաղկեփնջեր, հավաքել սնկեր, ջրային մակերևույթների առկայության դեպքում զբաղվել լողով, ձկնորսությամբ:

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Անտառպուրակներ



Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Փողոցային տնկարկներ

Քաղաքների կանաչապատման ամենապատասխանատու գործընթացներից մեկը փողոցների կանաչապատումն է, քանի որ նրանք բնակավայրերին բարձր գեղազարդություն հաղորդելուց զատ, իրենց էկոլոգիական և հողակլիմայական պայմաններով խիստ տարբերվում են ներքաղաքային մյուս տնկարկներից:

Փողոցային տնկարկներում ի տարբերություն ներքաղաքային մյուս տնկարկների ծառատեսակները ավելի կարճակյաց են:

Փողոցային տնկարկներում ծառատեսակների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրանց գազադիմացկունությունը և փոշեդիմացկանությունը:

Սովորաբար փողոցային տնկարկներում յուրաքանչյուր փողոց կանաչապատվում է մեկ տեսակի ծառատեսակով, սակայն պահպանելով ներդաշնակությունը, կարելի է կանաչապատել նաև տարբեր տեսակներով:

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Փողոցային տնկարկներ

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Փողոցային տնկարկներ



OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Սահմանափակ օգտագործման կանաչ տնկարկներ

Սահմանափակ օգտագործման կանաչ տնկարկներ են՝

- ✓ արդյունաբերական ձեռնարկություններին,
- ✓ բուժական հիմնարկներին կից պուրակները կամ այգիները
- ✓ մսուր-մանկապարտեզների այգիները
- ✓ դպրոցների շրջակա այգիները

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Սահմանափակ օգտագործման կանաչ տնկարկներ

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Հատուկ նշանակության կանաչ տնկարկներ

- ✓ Հատուկ նշանակության կանաչ տնկարկները կարող են լինել ինչպես ներքաղաքային, այնպես էլ մերձքաղաքային, երկու դեպքում էլ նրանք նախատեսված են որոշակի ֆունկցիա իրա-կանացնելու համար: Հատուկ նշանակության տնկարկները պայմանականորեն ստորաբաժանվում են 2 խմբի՝ փակ և երկիմաստ տնկարկներ:

- ✓ Փակ տնկարկների մեջ ընդգրկված են՝ հողապաշտպան, հողմնապաշտպան, ձյունապաշտպան, դաշտապաշտպան, հակահրդեհային, երկաթուղագծային ու ճանապարհապաշտպան և ռազմա-ստրատեգիական նշանակության տնկարկները

- ✓ Երկիմաստ տնկարկները, մի կողմից կարելի է դասել սահմանափակ օգտագործման տնկարկների, մյուս կողմից՝ հատուկ տնկարկների շարքում: Այսպիսի տնկարկներից են՝ բուսաբանական ու կենդանաբանական այգիները, ծառայգիները, ինչպես նաև ցուցահանդեսային ու մեմորալային-հուշագրական տնկարկները:

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - Հատուկ նշանակության կանաչ տնկարկներ



OPTIMIZE

Բնակավայրերի կանաչապատման ժամանակակից մոտեցումները - Քաղաք-այգի

OPTIMIZE

Բնակավայրերի կանաչապատման ժամանակակից մոտեցումները - Քաղաք-այգի

OPTIMIZE

Բնակավայրերի կանաչապատման ժամանակակից մոտեցումները - Կանաչ ենթակառուցվածք

Աջակցել բնակիչներին անտառայգիների պահպանման մեջ

Էկոլոգիական ցանցեռի ձևավորում և կառավարում

Կլիմայի փոփոխության նկատմամբ կայունության ապահովում

Ջրային ռեսուրսների կայուն կառավարում

Առողջության և բարեկեցության ապահովում



Ստեղծել և պահպանել կայուն բնակավայրեր

Պահպանել բնական լանդշաֆտները

Աջակցել կայուն տնտեսությանը

Աջակցել սննդամթերքի տեղական արտադրությանը

Ակտիվ ներգրավել տեղական խմբերը Կանաչ ենթակառուցվածքների զարգացման մեջ

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - **Կանաչ ենթակառուցվածքների ստեղծման ծրագիր**



OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - **Բնակավայրերի կանաչապատման ոլորտի իրավական կարգավորումները**

- ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածը սահմանում է հողային պաշարների կառավարման բնագավառում ՏԻՄ-երի լիազորությունները:

  1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում և հաստատում են համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը, քաղաքաշինական գոտիավորման նախագիծն ու հողերի օգտագործման սխեման:

- ՏԻՄ-երը սահմանում և փոփոխում են հողերի նպատակային և գործառնական նշանակությունը՝ համաձայն ՀՀ կառավարության «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 63 և «ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 64 որոշումների:

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - **Բնակավայրերի կանաչապատման ոլորտի իրավական կարգավորումները**

- **ՏԻՄ-երը իրականացնում են հողերի ընթացիկ հաշվառումը, ցամաքային ծածկույթի ընթացիկ դասակարգումը, անշարժ գույքի հարկի և պետական ու համայնքային հողերի վարձավճարների գանձումը, ինչպես նաև հսկողությունը հողամասերի օգտագործման, դրանց նկատմամբ սահմանափակումների պահպանման նկատմամբ:**
- **ՏԻՄ օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը:**
- **Կանաչապատման համար առանցքային նշանակություն ունի «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշումը:**

OPTIMIZE

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - **Բնակավայրերի կանաչապատման ոլորտի իրավական կարգավորումները**

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԿԱԽՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻՑ

Բնակավայրի տեսակը՝ ըստ բնակչության թվի	Բնակչության թիվը (հազ. մարդ)	
	քաղաքներ	գյուղեր
Խոշորագույն	500-ից ավելի	5-ից ավելի
Խոշոր	250-500	3-5
Մեծ	100-250	1-3
Միջին	50-100	0.2-1
Փոքր	20-50 10-20	0.05-0.2 մինչև 0.05

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - **Բնակավայրերի կանաչապատման ոլորտի իրավական կարգավորումները**

ԿԱՆԱՉ ԳՈՏՈՒ ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՆՈՐՄԵՐԸ

Բնակավայրի բնակչության թվաքանակը (հազ. մարդ)	Անտառապուրակային մասի չափերը (հա/հազ. մարդ)
500-ից ավելի	40
250 - 500	25
100 - 250	20
50 - 100	15
մինչև 50	10

Քաղաքային կանաչ տնկարկների կարևոր դերակատարությունները - **Բնակավայրերի կանաչապատման ոլորտի իրավական կարգավորումները**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՆՈՐՄԵՐԸ

Ընդհանուր օգտագործման կանաչապատված տարածքներ	Կանաչապատ տարածքների մակերեսը (քառ. մ/մարդ)			
	մեծ, խոշոր և խոշորագույն քաղաքներ	միջին քաղաքներ	փոքր քաղաքներ	գյուղական բնակավայրեր
Ընդհանուր բնակավայրի համար	10	6-8	8(10)*	12
Բնակելի շրջանի համար	6	6	-	-

* 20 հազար մարդուց պակաս բնակչությամբ փոքր քաղաքների համար

ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչապատման հիմնախնդիրները

- Խնդիրների մի մասը վերաբերում են **հողի նպատակային նշանակության փոփոխության**, տարբեր հողային կատեգորիաներում կանաչապատման աշխատանքների իրականացման **իրավաչափության**, **կադաստրային տվյալների ճշտության հետ**:
- Խնդիրների հաջորդ խումբը վերաբերում է **կանաչապատման պլանավորման գործընթացին**: Համայնքներ չունեն կանաչապատ տարածքների զարգացման հեռանկարային նախագծեր և դրանց պլանավորման հորիզոնը չի գերազանվում մինչև 1-2 տարի:

OPTIMIZE

ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչապատման հիմնախնդիրները

- Ուսումնասիրությունները վկայում են, **որ բազմաթիվ համայքներ չունեն ստույգ տվյալներ** առկա կանաչ տնկարկների զբաղեցրած տարածքների, տեսակաշարի, ծառաթփային բուսականության վիճակի, այդ թվում վնասատուների և հիվանդությունների առկայության վերաբերյալ:
- Բոլոր համայնքների հեռանկարային **զարգացման ծրագրերում կանաչապատ տարածքների հետ կապված մասը գրեթե բացակայում** է կամ ունի մակերեսային բնույթ:
- Համայնքներում **բացակայում են իրավական կարգավորումներ**՝ կանաչապատ տարածքների հետ կապված գործառույթների իրականացման վերաբերյալ:
- Գրեթե բոլոր համայքներում առկա են տեխնիկական միջոցների, խնամքի աշխատանքների իրականացման, ոռոգման համակարգերի **վերանորոգման և արդիականացման խնդիրները**, որոնք լուրջ խոչընդոտ են հանդիսանում կանաչ տնկարկների պահպանությունը ապահովելու և նորերը ստեղծելու համար:

OPTIMIZE

ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչապատման հիմնախնդիրների լուծման ուղիները

Հողի նպատակային նշանակության փոփոխության, տարբեր հողային կատեգորիաներում կանաչապատման աշխատանքների իրականացման իրավաչափության, կադաստրային տվյալների ճշտության հետ

- Համայքների կարողությունների զարգացում,
- Համայնքային բյուջեի ավելացում, պետական
- Մարմինների աշխատանքի որակի բարելավում

Կանաչապատ տարածքների հետագա ընդլայնման և զարգացման ռազմավարական ծրագրերի բացակայություն, պլանավորման փոքր հորիզոն

- Կանաչապատման առանձնացված բաժինների ձևավորում
- Մասնագիտական կարողությունների բարելավում, մասնագետների ներգրավում
- Առնվազն հնգամյա ռազմավարական ծրագրերի մշակում
- Մասնագետների համար վերապատրաստման և կարողությունների բարելավման ծրագրերի իրականացում
- Համայնք-մասնավոր հատված համագործակցության նոր ձևերի մշակում

OPTIMIZE

ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչապատման հիմնախնդիրների լուծման ուղիները

Առկա կանաչ տնկարկների զբաղեցրած տարածքների, տեսակաշարի, ծառաթփային բուսականության վիճակի, այդ թվում վնասատուների և հիվանդությունների առկայության վերաբերյալ տվյալների բացակայություն:

- Առկա կանաչ տարածքների թվային քարտեզների ստեղծում
- Ծառաթփային բուսականության վիճակի գնահատումը և գույքագրման իրականացում
- Նախատեսվող աշխատանքների տարեկան պլանների կազմում
- Վնասատուների և հիվանդությունների մոնիթորինգ:

Տեխնիկական միջոցների, խնամքի աշխատանքների իրականացման, ոռոգման համակարգերի վերանորոգման և արդիականացման խնդիրներ:

- Կանաչապատման բաժինների տեխնիկական վերազինում
- Ժամանակակից սարքավորումների ձեքբերում
- Խնամքի աշխատանքների իրականացման ժամանակացույցի հստակեցում, նոր ձևերի կիրառում
- Արդիական ոռոգման համակարգերի կիրառում, ջրախնայող տեխնոլոգիաների օգտագործում:

OPTIMIZE

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ARMENIA TREEPROJECT
«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ

Jinishian Memorial Foundation
JMF

ARMENIAN ENERGY AGENCY

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

OPTIMIZE